«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2003 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 21-Ի N 1779-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

2023 թվականի _____ N__-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2003 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 21-Ի N 1779-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի նոյեմբերի 21-ի «Մաքսային հսկողություն իրականացնելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ու տեղեկությունների ցանկերը և դրանք մաքսային մարմիններին տրամադրելու կարգը սահմանելու մասին» N1779-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Որոշման նախաբանում «Հայաստանի Հանրապետության օրենքի 124-րդ հոդվածի 2-րդ մասին» բառերը փոխարինել «օրենքի 205-րդ հոդվածի 2-րդ մասին» բառերով.

2) Որոշման 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«1. Սահմանել մաքսային հսկողություն իրականացնելու համար անհրաժեշտ փաստաթղթերի և տեղեկությունների ցանկը և դրանց մաքսային մարմիններին տրամադրման կարգը՝ համաձայն հավելվածի։».

3) Որոշման N1 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն

որոշման հավելվածի.

4) Որոշման N2, N3 և N4 հավելվածներն ուժը կորցրած ճանաչել:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Հավելված

ՀՀ կառավարության «____» _____ ____

N____-Ն որոշման

Հավելված

ՀՀ կառավարության 2003 թվականի

նոյեմբերի 21-ի N1779-Ն որոշման

ՄԱՔՍԱՅԻՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ

1. Ապրանքների և տրանսպորտային միջոցների ժամանման և մեկնման մաքսային գործառնությունների իրականացման ժամանակ մաքսային հսկողության իրականացման համար անհրաժեշտ փաստաթղթեր և տեղեկություններ են համարվում «Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին» 2017 թվականի ապրիլի 11-ի պայմանագրի հավելվածով հաստատված՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 89-րդ և 92-րդ հոդվածներով նախատեսված փաստաթղթերն ու տեղեկությունները:

2. Ապրանքների ժամանակավոր պահպանության մաքսային գործառնությունների իրականացման ժամանակ մաքսային հսկողության իրականացման համար անհրաժեշտ փաստաթղթեր և տեղեկություններ են համարվում Օրենսգրքի 100-րդ հոդվածով նախատեսված փաստաթղթերն ու

տեղեկությունները:

3. Ապրանքների հայտարարագրման մաքսային գործառնությունների իրականացման ժամանակ՝

1) Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող և Հայաստանի Հանրապետության տարածքից արտահանվող, ինչպես նաև «Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպվող ապրանքների և տրանսպորտային միջոցների համար մաքսային հսկողության իրականացման համար անհրաժեշտ փաստաթղթեր են համարվում Օրենսգրքի 108-րդ հոդվածով սահմանված՝ մաքսային հայտարարագրում ներառված տեղեկությունները հաստատող փաստաթղթերը.

2) Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող և Հայաստանի Հանրապետության տարածքից արտահանվող, ինչպես նաև «Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպվող ապրանքների և տրանսպորտային միջոցների համար մաքսային հսկողության իրականացման համար անհրաժեշտ տեղեկություններ են համարվում Օրենսգրքի 106-րդ և 107-րդ հոդվածներով նախատեսված՝ ապրանքների հայտարարագրում և տարանցման հայտարարագրում ներառվող տեղեկությունները.

3) ֆիզիկական անձանց կողմից Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող և Հայաստան Հանրապետության տարածքից արտահանվող անձնական օգտագործման ապրանքների համար մաքսային հսկողության իրականացման համար անհրաժեշտ փաստաթղթեր են համարվում Օրենսգրքի 261-րդ հոդվածով նախատեսված՝ ուղևորային մաքսային հայտարարագրում ներառված տեղեկությունները հաստատող փաստաթղթերը, իսկ մաքսային հսկողության իրականացման համար անհրաժեշտ տեղեկություններ են համարվում այդպիսի հայտարարագրում ներառվող տեղեկությունները.

4) միջազգային փոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցների մաքսային հսկողության իրականացման համար անհրաժեշտ փաստաթղթեր են համարվում տրանսպորտային միջոցի հայտարարագրում ներառված տեղեկությունները հաստատող փաստաթղթերը, իսկ մաքսային հսկողության իրականացման համար անհրաժեշտ տեղեկություններ են հանդիսանում՝ այդպիսի հայտարարագրում ներառված տեղեկությունները հաստատող փաստաթղթերը:

4. «Մաքսային կարգավորման մասին» օրենքին համապատասխան՝ անձի լիազորությունները հաստատող անհրաժեշտ փաստաթղթերն են՝

1) անձնագիրը կամ անձը հաստատող այլ փաստաթուղթ.

2) անձի՝ որպես հայտարարատու հանդես գալու համար լիազորությունները հաստատող անհրաժեշտ փաստաթուղթը (լիազորագիր կամ նմանատիպ այլ փաստաթուղթ):

5. Մաքսային հսկողության իրականացման համար անհրաժեշտ փաստաթղթերը և տեղեկությունները մաքսային մարմիններին են տրամադրվում Օրենսգրքի 80-րդ, 324-րդ, 325-րդ, 340-րդ հոդվածներով,

ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մարտի 30-ի N546-Ն որոշմամբ սահմանված կարգով:

6. Մաքսային գործի բնագավառում ռեեստրային գործունեության իրականացնող անձանց գործունեության նկատմամբ մաքսային հսկողության իրականացման համար անհրաժեշտ փաստաթղթեր և տեղեկություններ են համարվում անձանց կողմից համապատասխան ռեեստրներում ընդգրկման համար Օրենսգրքով և «Մաքսային կարգավորման մասին» օրենքով նախատեսված փաստաթղթերը և տեղեկությունները, ինչպես նաև ռեեստրային գործունեություն իրականացնող անձանց կողմից մաքսային մարմիններ ներկայացվող՝ Օրենսգրքով և «Մաքսային կարգավորման մասին» օրենքով նախատեսված հաշվետվությունները:

7. Անկախ սույն որոշմամբ սահմանված փաստաթղթերից և տեղեկություններից, մաքսային հսկողության իրականացման համար անհրաժեշտ փաստաթղթեր և տեղեկություններ են համարվում անձանց կողմից Օրենսգրքով և «Մաքսային կարգավորման մասին» օրենքով սահմանված առանձին գործառնությունների իրականացման փուլում մաքսային մարմինների կողմից Օրենսգրքի 324-րդ, 325-րդ հոդվածներին համապատասխան պահանջվող փաստաթղթերն ու տեղեկությունները: